



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-23/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2016թ. թիվ 03/73-3/28193-16 և 14.04.2017թ. թիվ 03/73-3/6683-17 գրություններով ներկայացված «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01000327) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-23/17 բողոք), պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 25.11.2016թ. թիվ 40-2395 և 14.12.2016թ. թիվ 40-2552 գրությունների հիման վրա, 20.12.2016թ. թիվ 03/73-3/28193-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը

և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 30.12.2016թ. թիվ 01/04.1/4835-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ հնարավոր չէ հաստատել «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացումը, քանի որ 27.10.2016թ. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Հարոյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վ. Հարությունյանի միջև կնքվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որով Ընկերությունը պարտավորվել է իր հարկային պարտավորությունները կատարել՝ ըստ սահմանված ժամանակացույցի, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2016թ. թիվ 03/73-3/28193-16 գրությամբ ներկայացված «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.04.2017թ. թիվ 03/73-3/6683-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

Ընկերությունը 29.12.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 18.11.2016թ. հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-4» ծածկագրով ընթացակարգին, որի շրջանակում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն տրամադրել է եզրակացություն, որ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 30,161,593 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

«ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ 27.10.2016թ. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Հարոյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վ. Հարությունյանի միջև կնքվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որով Ընկերությունը պարտավորվել է իր հարկային պարտավորությունները կատարել ըստ սահմանված ժամանակացույցի, որի վճարման վերջնաժամկետը 2017թ. ապրիլ ամիսն է:

Ընկերությունը նշել, որ համաձայն նշված ժամանակացույցի՝ 2016թ. նոյեմբեր ամսում Ընկերությունը պետք է վճարեր 5.229.000 ՀՀ դրամ, որը կատարվել է «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից, ինչը հավաստվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՍՊԸ-ի և Արդշինբանկ Զվարթնոց մասնաճյուղի վճարման հանձնագրագրերի պատճեններով, որից հետո միայն Ընկերությունը համոզված լինելով, որ չունի որևէ չվճարված հարկային պարտավորություն նոյեմբեր ամսվա համար՝ 18.11.2016թ. մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-4» ծածկագրով ընթացակարգին:

Ընկերությունը նշել է նաև, որ վերջինս գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալ չի ներկայացել, ուստի խնդրել է Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-23/17 բողոքը քննող հանձնաժողովի 02.05.2017թ. ժամը 15:40-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 18.11.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ՊԵԿ-ին տրամադրել տեղեկատվություն «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն 2016թ.

նոյեմբերի 18-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 30,161,593 ՀՀ դրամի չափով, որի հիման վրա Ընկերության հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-23/17 բողոքը քննող հանձնաժողովի 02.05.2017թ. ժամը 15:40-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-23/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2016թ. թիվ 03/73-3/28193-16 և 14.04.2017թ. թիվ 03/73-3/6683-17 գրություններով ներկայացված «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **2016թ. նոյեմբերի 18-ին** հայտ է ներկայացրել նաև «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ **(18.11.2016թ.)** չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 18.11.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ՊԵԿ-ին տրամադրել տեղեկատվություն «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն 2016թ. նոյեմբերի 18-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 30,161,593 ՀՀ դրամի չափով:

5. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն 29.12.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 27.10.2016թ. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Հարոյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վ. Հարությունյանի միջև կնքվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որով Ընկերությունը պարտավորվել է իր հարկային պարտավորությունները կատարել ըստ սահմանված ժամանակացույցի, որի վճարման վերջնաժամկետը 2017թ. ապրիլ ամիսն է:

Ընկերությունը նշել, որ համաձայն նշված ժամանակացույցի՝ 2016թ. նոյեմբեր ամսում Ընկերությունը պետք է վճարեր 5.229.000 ՀՀ դրամ, որը կատարվել է «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից, ինչը հավաստվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՍՊԸ-ի և Արդշինբանկ ՋՎարթնոց մասնաճյուղի վճարման հանձնազարագրերի պատճեններով, որից հետո միայն Ընկերությունը համոզված լինելով, որ չունի որևէ չվճարված հարկային պարտավորություն նոյեմբեր ամսվա համար՝ 18.11.2016թ. մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-4» ծածկագրով ընթացակարգին:

6. Կենտրոնը 30.12.2016թ. թիվ 01/04.1/4835-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ հնարավոր չէ հաստատել «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացումը, քանի որ 27.10.2016թ. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Հարոյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վ. Հարությունյանի միջև կնքվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որով Ընկերությունը պարտավորվել է իր հարկային պարտավորությունները կատարել ըստ սահմանված ժամանակացույցի, ուստի

Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2016թ. թիվ 03/73-3/28193-16 գրությամբ ներկայացված «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

7. Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.04.2017թ. թիվ 03/73-3/6683-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՍՑ-23/16 բողոքը, ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2016թ. թիվ 03/73-3/28193-16 և 14.04.2017թ. թիվ 03/73-3/6683-17 գրությունները, «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի 29.12.2016թ. գրությունը և կից փաստաթղթերը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը, գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **2016թ. նոյեմբերի 18-ին** հայտ է ներկայացրել նաև «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ **(18.11.2016թ.)** չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարերի գծով:

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 18.11.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ՊԵԿ-ին տրամադրել տեղեկատվություն «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն 2016թ. նոյեմբերի 18-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 30,161,593 ՀՀ դրամի չափով:

«ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն 29.12.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 27.10.2016թ. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Հարոյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վ. Հարությունյանի միջև կնքվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որով Ընկերությունը պարտավորվել է իր հարկային պարտավորությունները կատարել ըստ սահմանված ժամանակացույցի, որի վճարման վերջնաժամկետը 2017թ. ապրիլ ամիսն է:

Ընկերությունը նշել, որ համաձայն նշված ժամանակացույցի՝ 2016թ. նոյեմբեր ամսում Ընկերությունը պետք է վճարեր 5.229.000 ՀՀ դրամ, որը կատարվել է «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից, ինչը հավաստվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՍՊԸ-ի և Արդշինբանկ Զվարթնոց մասնաճյուղի վճարման հանձնագրագրերի պատճեններով, որից հետո միայն Ընկերությունը համոզված լինելով, որ չունի որևէ չվճարված հարկային պարտավորություն նոյեմբեր ամսվա համար՝ 18.11.2016թ. մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-4» ծածկագրով ընթացակարգին:

Կենտրոնը 30.12.2016թ. թիվ 01/04.1/4835-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ հնարավոր չէ հաստատել «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացումը, քանի որ 27.10.2016թ. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Հարոյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վ. Հարությունյանի միջև կնքվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որով Ընկերությունը պարտավորվել է իր հարկային պարտավորությունները կատարել ըստ սահմանված ժամանակացույցի, ուստի

Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2016թ. թիվ 03/73-3/28193-16 գրությամբ ներկայացված «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.04.2017թ. թիվ 03/73-3/6683-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

«ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊԶԲ-15/10-4» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով **18.02.2017թ.** ներկայացրած հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն **2016թ. նոյեմբերի 18-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 30,161,593 ՀՀ դրամի չափով,** որի հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է:

«ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն 29.12.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 27.10.2016թ. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Հարոյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վ. Հարությունյանի միջև կնքվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որով Ընկերությունը պարտավորվել է իր հարկային պարտավորությունները կատարել ըստ սահմանված ժամանակացույցի, որի վճարման վերջնաժամկետը 2017թ. ապրիլ ամիսն է:

Ընկերությունը նշել, որ համաձայն նշված ժամանակացույցի 2016թ. նոյեմբեր ամսում Ընկերությունը պետք է վճարեր 5.229.000 ՀՀ դրամ, որը կատարվել է «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից, ինչը հավաստվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՍՊԸ-ի և Արդշինբանկ Զվարթնոց մասնաճյուղի վճարման հանձնագրագրերի պատճեններով, որից հետո միայն Ընկերությունը համոզված լինելով, որ չունի որևէ չվճարված հարկային պարտավորություն նոյեմբեր ամսվա համար՝ 18.11.2016թ. մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-4» ծածկագրով ընթացակարգին:

Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում Ընկերության կողմից «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-4» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի կարող դիտարկվել որպես Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, քանի որ Ընկերության և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վ. Հարությունյանի միջև կնքվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որով Ընկերությունը պարտավորվել է իր հարկային պարտավորությունները կատարել՝ ըստ սահմանված ժամանակացույցի, որի վճարման վերջնաժամկետը 2017թ. ապրիլ ամիսն է, **մինչդեռ Ընկերության կողմից «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-4» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացվել 18.02.2017թ.:** Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը սույն հիմքով Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2016թ. թիվ 03/73-3/28193-16 և 14.04.2017թ. թիվ 03/73-3/6683-17 գրություններով ներկայացված «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01000327) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի բացակայության հիմքով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Գևորգ Հայրապետյան

Անդամ՝



Ռուզաննա Հովհաննիսյան